


Ծիրվանցի հայ հրամանատարների սպանոն Ավետարանոցում (1723 թ. հունիս)

Արվազյան Արմեն Մ.

*պ.գ.թ., ք.գ.դ., ավագ գիտաշխատող, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին
ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0003-2724-7695>

armenayvazyan@gmail.com

ՀՏԳ՝ 94 (479.25, 55); EDN: VHPUXE

DOI: 10.58587/18292437-2024.4-58

Հանգուցարաներ և բառակապակցություններ` Ղարաբաղի Հայոց Սղնախներ, շիրվանցի հայ հրամանատարներ, Ավան-յուզբաշու իշխանապետություն, Ծիրվան-յուզբաշի, մելիք Բաղեր, Ավետարանոց, հատուկ ռազմագործողություն

Резня ширванских армянских командиров в Аветараноце (июнь 1723 г.)

Айвазян Армен М.

к.и.н., д.п.н., старший научный сотрудник, «Матенадаран» — Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца (Ереван, РА)

Аннотация. Армянские источники 1720-х годов сообщают о тяжелом историческом эпизоде – вероломном братоубийстве, произошедшем в карабахском селе Аветараноц в 1723 году. В статье эти сведения впервые подвергаются обстоятельному анализу. Устанавливается время действия (июнь 1723 года), уточняются число убитых (47 или 55 человек) и личность их командира – Ширвана-юзбаша. Мотивы и последствия убийства рассматриваются в контексте сложной внутривосточной ситуации, сложившейся с 1722 года в обретших де-факто независимость армянских княжествах Карабаха — *Карабахских Армянских Сагнаках*.

В период с 1723 по 1728/29 годы в Карабахе (Арцах) фактически сосуществовали два самостоятельных армянских военно-феодальных лагеря, которые иногда объединялись против внешнего врага, а иногда соперничали и враждовали. Одна из этих группировок, в военном отношении более мощная и сплоченная, состояла из профессиональных армянских воинов-командиров – выходцев из провинции Ширван, которые в 1722 году перебрались в Карабах и руководили процессом воссоздания, формирования и вооружения армянских войск. Другая группировка включала часть представителей местной аристократии – меликов Гюлистана, Джраберда и Варанды, которые выступали против расширения и усиления власти ширванских командиров.

Убийство ширванских армянских командиров в Аветараноце, организованное меликом Варанды Багером, оставило глубокую рану в памяти современников. Это преступление серьезно подорвало усилия по объединению всех карабахских армянских войск в национально-освободительный фронт под единым командованием. Тем не менее, благодаря высокому уровню патриотизма, военной организованности и исключительной выдержке предводителей ширванцев (Авана-юзбаша, Тархана-юзбаша и ряда других видных военачальников, любовно называемых в народе «ширванскими парнями»), междоусобной войны удалось избежать. А уже с начала 1725 года мелик Багер присоединился к лагерю ширванцев и вместе с ними вступил в упорную борьбу против османских завоевателей, оставаясь преданным этому делу до своей кончины, произошедшей между 1727 и 1730 годами.

Ключевые слова и словосочетания: Карабахские Армянские Сагнаки, ширванские командиры-армяне, княжество Авана-юзбаша, Ширван-юзбаша, мелик Багер, Аветараноц, специальная военная операция

The Massacre of the Shirvan Armenian Commanders in Avetaranotz (June 1723)

Ayvazyan Armen M.

Doctor of Political Science,

“Matenadaran” Mesrop Mashtots Scientific Research Institute of Ancient Manuscripts (Yerevan, RA)

Abstract. Armenian sources from the 1720s recount a treacherous fratricide that took place in the Karabakh village of Avetaranotz in June 1723. A thorough analysis of these records reveals various details about this tragic event, including the number of victims (47 or 55 men) and the identity of their commander, Shirvan-Yuzbashi. The motives and consequences of the massacre are examined within the context of the complex domestic political situation that had developed since 1722 in the de facto independent Armenian principalities of Karabakh, also known as the Karabakh Armenian Sagnaks.

Between 1723 and 1728/29 in Karabakh (Artsakh), two independent Armenian military-feudal factions coexisted. They sometimes united against external enemies and at other times competed and feuded with each other. The more powerful and cohesive of these groups consisted of professional Armenian military commanders who had immigrated from the

province of Shirvan. In 1722, they moved to Karabakh and led the process of reviving, forming, and arming Armenian troops. The other group included part of the local aristocracy, specifically the traditional rulers (meliks) of the Gulistan, Dzhraberd, and Varanda cantons of Karabakh, who opposed the expansion and strengthening of the Shirvan commanders' power.

The murder of the Shirvan Armenian commanders in Avetaranotz, orchestrated by Melik-Bagher of Varanda, left a deep wound in the memory of contemporaries. This crime seriously undermined efforts to unite all Karabakh Armenian forces into a national liberation front under a single command. Nevertheless, thanks to the high level of patriotism, effective military organization, and exceptional resilience of the Shirvan commanders (Avan-Yuzbashi, Tarkhan-Yuzbashi, and several other prominent generals affectionately known among the Karabakh populace as the "Shirvan guys"), a destructive civil war was avoided. Moreover, beginning in early 1725, Melik Bagher joined the camp led by his former rivals and engaged in a determined struggle against the Ottoman conquerors, remaining devoted to this cause until his death between 1727 and 1730.

Keywords & phrases: Karabakh Armenian Sagnaks, Shirvan Armenian commanders, Principality of Avan-Yuzbashi, Shirvan-Yuzbashi, Melik-Bagher, Avetaranotz, special military operation

1720-ական թթ. հայ ազատագրական շարժման երկու երևելի դեմքեր՝ նախ Հայկական Եսկադրոնի հիմնադիր հրամանատար Պետրոս դի Սարգիս Գիլանենցը¹, ապա և Ղարաբաղի Հայոց Սղնախներում Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը, միմյանցից անկախ, հաղորդել են 1723 թ. Ավետարանոց գյուղում տեղի ունեցած եղբայրասպանության մի ծանր ոճրի մասին: Չարմանալիորեն, այս եղերական իրադարձությունը ցայսօր չի ենթարկվել հանգամանալից պատմագիտական վերլուծության՝ ստանալով միայն հպանցիկ ու հաճախ սխալական մեկնաբանություններ²: Մինչդեռ

դեպի մանրամասն քննությունը պարտադիր է՝ ճիշտ ու խորությամբ հասկանալու համար 1722-1725 թթ. Ղարաբաղում տեղի ունեցած զարգացումները:

Նախքան բուն հարցի քննությանն անցնելը, հարկ է համառոտ ներկայացնել 1722 թ. ի վեր Ղարաբաղում (Արցախում) ստեղծված ներքին իրավիճակը: 1722 թ. գարնանն Ավան-յուզբաշու գլխավորությամբ՝ հայ ազատագրական շարժմանը մասնակցելու նպատակով Շիրվանից Ղարաբաղ էին անցել սեֆյան կանոնավոր զորքի կազմում ծառայած տասնյակ փորձառու հայ հրամանատարներ՝ *յուզբաշիներ*: Նրանց ղեկավարությամբ տեղում սկսվել էր հայոց բազմահազարանոց զորքի վերստեղծումը՝ զորահավաքները, զորամիավորների կազմավորումը, մարտիկների զինումն ու վարժեցումը, ամրաշինությունների կառուցումը: «Շիրվանցի տղաները» («Շիրվանայ տղերք»), ինչպես անվանում էին նրանց Արցախում [25, վավ. 278, էջ 187], հաստատել էին իրենց ինքնուրույն իշխանապետությունը, որի կորիզը Խաչենն էր և Վարանդայի մի մասը՝ Շուշի կենտրոնով:

Փաստացիորեն, 1723-1728/29 թթ. Արցախում կողք կողքի գոյակցում էին հայկական երկու անկախ ռազմաֆեոդալական միավորումներ, որոնք երբեմն դաշնակցում էին արտաքին թշնամու դեմ³ (որպես կանոն՝ Ավան-յուզբաշու ընդհանուր հրամանատարության ներքո), երբեմն՝ մրցակցում, գժտվում և իրար դեմ դուրս գալիս: Դրանցից ավելի հզորն Ավան-յուզբաշու և նրա շիրվանցի զինակիցների գլխավորած առանձին, կուռ իշխանապետությունն էր՝ Ղարաբաղի Հայոց Սղնախների հիմքը: Այն կարելի է պայմանականորեն անվանել *Շիրվանցիների արցախյան*

¹ Նորջուղայեցի վանատական Պետրոս դի Սարգիս Գիլանենցը (ռուսական վավերագրերում՝ Պյոտր Սերգեն) դեռևս մինչև 1722 թ. հայ գաղտնի ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր: Նա գլխավորել է 1723 թ. ռուսական բանակի կազմում ստեղծված Հայկական Եսկադրոնը, որը հիմնադրվել է իր և իր զինակիցների անձնական ծախսերով: 1724 թ. գոհվել է Ռեշտի համար մղված մարտերում (մանրամասն տե՛ս [18, էջեր 105-128; 23, վավերագրեր 32, 159, էջեր 145-155, 390-392; 14, էջեր 175-176; 40, էջեր 76-77]):

² Լեոն, առանց որևէ քննության, բնագրային վիճակում մեջբերել է Գիլանենցի հաղորդումը [13, էջ 336, ծնթ. 1]: Պ. Հարությունյանն առաջինն է նկատել, որ Իվան Կարապետի և Գիլանենցի հաղորդումները վերաբերում են նույն դեպքին, որը, սակայն, առանձին հետազոտության չի ենթարկվել [27, էջեր 229-230]: Աշ. Հովհաննիսյանը, անդրադառնալով միայն Իվան Կարապետի հաղորդմանը և ճիշտ մատնանշելով, որ Ավետարանոց գյուղի մելիք Բաղերը հետագայում դարձել է «սղնախցիների ազատագրական պայքարի հետևողական մարտիկ», միաժամանակ, այդ փաստը հիմք ընդունելով, փորձում է ժխտել շիրվանցի ռազմիկների նկատմամբ նրա գործած ոճրագործությունը՝ ընդամին սխալ պատճառաբանելով, թե այն այլ աղբյուրներով իբր չի հաստատվում [24, էջ LXI]: Իսկ Աշ. Աբրահամյանը, չնկատելով, որ 1725 թ. ի վեր մելիք Բաղերի և շիրվանցիների միջև այլևս գժտություն և բախումներ չեն եղել, թյուրիմացաբար կարծում է, թե Բաղերը «անպատիժ շարունակել է իր մեքենայությունը հետագա տարիներին ևս» [1, էջ 42]: Բացի այդ, նա մելիք Բաղերին սխալմամբ Բաղի է անվանում [1, էջեր 40-42], բայցև իրավացիորեն ուղղում է Լեոյին, ով նույնացնում էր Վարանդայի մելիք Բաղերին Տաթևի հավատուրաց մելիք Բաղերի հետ [1, էջ 42]: Պ. Չոբանյանը, առանց լրացուցիչ մեկնաբանությունների ու բացատրությունների, բնագիր վիճակում ընդարձակորեն մեջբերել է Իվան Կարապետի հաղորդումը [19, էջեր 205-207]: Իմիջիայոց, նույն հոդվածում Չոբանյանը չի նկատել մեր ավելի վաղ հետազոտությունները, որոնք նոր բացա-

հայտումներով անդրադարձել են իր քննարկած հարցերին, մասնավորաբար՝ «շիրվանցիներին» [2, էջեր 70-71] և 1726 թ. նոյեմբերի 15-ից մինչև 23-ը Շուշիի բերդի վրա օսմանյան բանակի գրոհին [42, էջեր 20, 71-72]:

³ Տե՛ս, օրինակ, Ղարաբաղի բոլոր հիմնական ղեկավարների կողմից 1724 թ. մարտի 20-ին և 1725 թ. հուլիսի 25-ին ստորագրված վավերագրերը [25, վավ. 233, 315, էջեր 91-92, 248-251]:

իշխանապետություն կամ պարզապես Ավան-յուզբաշու իշխանապետություն:

Արցախում ի հայտ եկած մյուս հայկական ռազմաֆեոդալական միավորումը բաղկացած էր բուն դարաբաղցի մի քանի մելիքներից ու նրանց ենթակա զինյալ ուժերից: Այդ պակաս կայուն խմբավորումը գլխավորում էին Գյուլիստանի, Ջրաբերդի ու Վարանդայի մելիքները⁴, որոնք անբարյացակամ ու խանդոտ վերաբերմունք ունեին շիրվանցի ռազմիկների նկատմամբ, երբեմն նույնիսկ անթաքույց պայքար էին մղում Արցախում նրանց ստեղծած իշխանապետության, տնտեսական կարողությունների և ժողովրդի շրջանում վայելած մեծ հեղինակության դեմ⁵:

Եվ այսպես, համաձայն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի օրագրային զեկուցագրի, 1723 թ. օգոստոսի 20-ին Թավրիզից Ռեշտ է ժամանել ոմն դափանցի Հարություն, որն իրեն հաղորդել է հետևյալ ողբայի տեղեկությունները.

«Այդ ժամանակ (իմա՝ 1723 թ. օգոստոսի 20-ին – Ա.Ա.) դափանցի Հարությունը Թավրիզից եկավ, հայտնեց, որ հայոց հրամանատար (բնագրում՝ *յուզբաշի* – Ա.Ա.) Ղանլու Շիրվանը և Դիզակի Ավետարանոց գյուղի մելիք Բաղիի տղան վեճ են ունեցել: Նրանց հաշտեցրել են, այնուհետև մելիք Բաղիի տղան Ղանլու Շիրվանին հրավիրել է պատիվ տալու (=հյուրասիրության): Այս հրամանատար Ղանլու Շիրվանն էլ իր 300 հայ մարտիկների հետ միասին գնում է մելիք Բաղիի գյուղը հյուրասիրության: Մինչ այդ մելիք Բաղիի տղան իր գյուղի ժողովրդին կարգադրում է, թե՛ «Ղանլու Շիրվանին մի քանի հոգու հետ միասին կտանեմ իմ տունս, ձեզանից յուրաքանչյուրը նրա մարդկանցից 5-6 հոգի կտանեք ձեր տները, իսկ այն պահին, երբ հրացանի կրակոց լսեցիք՝ ձեր հյուրերին [տեղնուտեղը] կապանեք»: Այսպես սպանում են Ղանլու Շիրվանին ու նրա 300 մարտիկներին: Այս թշվառ նորրնձա հայոց հրամանատար Ղանլու Շիրվանին իր 300 մարտիկների հետ միասին սպանում են՝ վարվելով [նրանց

հետ] ճիշտ այնպես, ինչպես խիվիցիները՝ [իշխան] Ազբեկովիչի հետ»:

[«*Վերոյ թարեղումն դափանեցի Յարութիւնն Թարվիզու արեկ, ասաց՝ թէ Խայի ուզբաշի Ղանլու Շիրվանն⁶ և Դուզաղու Ավետարանոց գեղին մելիք Բաղուն տղին⁷ խեռ փարիսաշտի (=վեճ) կունենան. կր խաշտացնեն էլ մելիք Բաղուն տղէն Ղանլու Շիրվանին պատիվ կր կանչեն: Էս ուզբաշի Ղանլու Շիրվանն ԳՃ (300) խայով կր գնայ էս մելիք Բաղուն գեղն պատիվ: Էս մելիք Բաղուն տղէն յառէ նոր գեղին խայխին (=ժողովրդին) պատուկը կննի սովել, թէ «Ղանլու Շիրվանն քանի խոգով կր տանեմ իմ տունս, նրա մարդիքն Ե-2 (5-6) խոգով տարեք ձեր տներն, յեփ (=երբ) մին թփանգի ձէն լսեք՝ յամէն մարդ ուր դոնաղն (=հյուրերին) սպանի»: Էսպէս կր տան Ղանլու Շիրվանին և իւր ԳՃ մարդին կր սպանեն: Էս ողորմելի նորրնձա Խայի ուզբաշի Ղանլու Շիրվանն ուր ԳՃ մարդովն կր սպանեն: Էնպէս ան արարել՝ դոր որ խիվիցիքքն Ազբեկովիճին արարին»] [9, §131, էջ 207]⁸:*

⁶ Հրատարակության մեջ՝ «Շաբան» և «Շապան», սակայն սույն հետազոտության հետագա շարադրանքում ցույց է տրված, որ դա վրիպակ է: Իրականում խոսքը վերաբերում է 1722-1723 թթ. հայտնի դարձած Շիրվան (Շրուան, Շրվան) յուզբաշուն:

⁷ Գիլանենցի օրագրության հրատարակությունում «մելիք Բաղու» փոխարեն ամենուր փոխված կարդացվել է «մելիքբաշու» (9, §131, էջ 207. հմմտ. 1, էջ 42): Եթե այս ընթերցումը բնագրային լիներ, ապա այն նշանակելու էր Ավետարանոց գյուղի «գլխավոր մելիք», որ անհերթեթություն է (թեև այդ դեպքում էլ խոսքը վերաբերելու էր նույն մելիք Բաղերին): 1724 թ. փետրվարի 24-ին Իվան Կարապետն այսպես էր հիշատակում մելիք Բաղերին՝ «Մելիք Պաղի թոռնը մելիք Պաղըր» (25, վավ. 214, էջ 72): Աներկբա է, որ բնագրում գրված է եղել ոչ թե «Բաշուն», այլ «Բաղուն»: Հետևաբար, ճիշտ ընթերցումն է՝ «մելիք Բաղուն տղին», որովհետև մելիք Բաղերը մելիք Բաղիի որդին էր (ըստ Գիլանենցի) կամ թոռը (ըստ Իվան Կարապետի):

⁸ Բնագրի ռուսերեն թարգմանությունն այսպիսին է. «Того же числа, прибыл из Тавриза Арутюн, житель Капана и со-общил, что армянский узбаша, Ганлу-шабан, был в ссоре с сыном Мелик-баши села Аветараноц. Их успели помирить. Сын Мелик-баши приглашает к себе в гости Ганлу-шабана. Тот (узбаша Ганлу-шабан) идет на приглашение в мелик-башево село в сопровождении 300 армян. Между тем сын Мелик-баши дал такое предписание жителям своего села: “я поведу к себе в дом Ганлу-шабана с несколькими из его приближенных. Вы, так же, пригласите к себе по 5, по 6 душ из его отряда в гости. Как только услышите ружейный выстрел, то каждый из вас пусть умертвит своего гостя”. Так умертвили Ганлу-шабана и его дружину из 300 человек. Убив этого новопожалованного армянского узбаша Шабана и его триста человек, жители Аветараноца поступили точно также, как Хивинцы с Бековичем» [37, էջ 51]: Բնագրի անգլերեն թարգմանությունն այսպիսին է. «On the above date, Haruthoon of Qapan arrived from Tabriz. He stated that an Armenian yüz-bashi named Qanlu Shaban had had a quarrel with the son of Melikbashi (Melik Baqi) of the village of Avetaran, in the district of Duzakh, (but that) they had been

⁴ Վարանդայի մելիք Բաղերը հաճախ բոլորովին առանձին դիրքորոշում էր բռնում, մասնավորապես՝ 1722-1724 թթ. նա բացահայտորեն պարսկամետ դիրքորոշում ուներ և պարբերաբար դեմ էր հանդես գալիս ազատագրական շարժմանը (տե՛ս, օրինակ, [25, վավ. 205, 206, 210, էջեր 63, 65, 69]):

⁵ 1722-1730 թթ. Լարաբաղի Հայոց Սղնախներում մերթ դաշնակցող, մերթ հակամարտող երկու վերոնշյալ ռազմաֆեոդալական խմբավորումների մանրամասն քննությունը տե՛ս մեր առաջիկայում հրատարակվելիք «Հայոց գործն Արցախում, 1722-1735 թթ.» մենագրության մեջ:

1723 թ. դեկտեմբերի վերջին Ղարաբաղ ժամանած Իվան Կարապետը նույն դեպքը պատմում է լրացուցիչ մանրամասներով ու որոշ տարբերություններով: Մասնավորապես, Ավետարանոցում սպանված հայ ռազմիկների թիվը նա հաշվում է ոչ թե 300 (ինչպես Գիլանենցի լրատու դափանցի Հարությունը), այլ իր մի հաղորդումում՝ 47, մյուսում՝ 55 հոգի: Այսպես, 1724 թ. փետրվարի 2-ին նկարագրելով Ղարաբաղում մելիք Բաղերի որդեգրած պառակտչական գործունեությունը (ներառալ նրա սպաստակումները շիրվանցի հայ ռազմիկների վերահսկած գյուղերի դեմ և դեպի Սեֆյանները հակվածությունը), Իվան Կարապետը ծանուցում է նաև վերոհիշյալ ուխտադավության մասին.

«[Մելիք Բաղերը] խաբեությամբ իր տուն իբր հյուրասիրության է հրավիրել 55 բարձրաստիճան և մարտունակությամբ աչքի ընկնող հայ հրամանատարների, գլուխները կտրել է և ուղարկել շահին (իմա՝ Թահմասպ Բ-ին – Ա.Ա.):»:

[«ՕԵ (55) մեծայմեծ Հայոց ուզբաշիքրն, որ կովարար ին, խաբով տարել այ ուրէնց տուն պատիվ, գլխնին կտրել այ, աղարկել շային»] [25, վավ. 205, էջ 63]:

Նույն վավերագրի ռուսերեն թարգմանության մեջ այդ սպանությունը ներկայացված է առավել ամփոփ.

«...միայն թե մեկ մելիք Բաղեր կա, ով ամբողջ ունի և [պարբերաբար] հարձակումներ և ավերածություններ է գործում այն հայերի դեմ, որոնք կայսերական մեծության (իմա՝ ռուսաց ցար Պետրոս Մեծի) կողմն են հակված: Նա շահի որդու (իմա՝ շահ Թահմասպ Բ-ի – Ա.Ա.) կողմից է: Երբ տեղեկանում է, որ կայսերական մեծության կողմից մարդ է ուղարկված, նրանց լրտեսների պես բռնում է և ուղարկում շահի որդուն: Մի որոշ ժամանակ առաջ նա խաբեորեն իր մոտ հրավիրեց [հայոց] զորքից 55 երևելի հայ հարյուրապետների (յուզբաշիների), գլխատեց նրանց և [գլուխները] շահին ուղարկեց: Այդ իսկ պատճառով բոլոր հայերը որոշել են արշավել նրա դեմ ու սպանել նրան, իսկ նրա ամբողջը՝ քանդել: Եվ երբ

այդ գործը գլուխ բերեն, այնուհետև որևէ մեկը նրանց չի կարող խանգարել. իրենց ձեռքերը կարձակվեն և ամուր կկանգնեն նորին կայսերական մեծության կողմը»:

[«...только есть один велик Багер, которой имеет у себя крепость и нападает на армян, на тех, которые склонны к стороне императорского величества и разоряет и держит партию шахзады, и ежели уведает, что кто прислан со стороны его императорского величества, тех ловит яко шпионов и отсылает к нему, шаху заде. И пред некоторым временем зазвав к себе обманом пятьдесят пять человек юзбашей армянских, знатных людей, которые были при войске, отрубил им головы и послал к шаху. И для того все армяне присоветовали на него итти собрався и его убив, городок разорить. И когда они то учинят, то им ни от кого помехи не будет и будут свободные руки иметь, крепко содержать себя при стороне его императорского величества»] [25, վավ. 206, էջ 65 (ընդգծումը՝ Ա.Ա.):]

Կես տարի անց՝ 1724 թ. հուլիսին կամ օգոստոսին գրված իր մեկ ուրիշ նամակում⁹ Իվան Կարապետը տալիս է սպանված շիրվանցի հայ ռազմիկների փոքր-ինչ այլ թիվ՝ 47 հոգի՝ ավելացնելով, որ այդ դեպքը տեղի է ունեցել դեռևս մինչև իր Ղարաբաղ գալը, այսինքն՝ մինչև 1723 թ. դեկտեմբեր.

«...երբ մենք եկանք այս նահանգը (իմա՝ Ղարաբաղ – Ա.Ա.), տեսանք, որ մելիք Բաղերը, ով Սեֆյան իշխանության կողմն էր բռնել, շիրվանցիներից 47 գլխավոր դեմքերի կանչել էր իբր պատիվ տալու, նրանց որպես հյուր խաբեությամբ ցրել էր առանձին տներում, իսկ գիշերը յուրաքանչյուր տանտեղ իր հյուրին սպանել էր»:

[«...մեք եկինք էս երկիրս, տեսինք որ մելիք Բաղերը, որ ղզբաշն էր ուզում, որ շիրվանցոնց ԽԵ (47) գլխատոր մարդիքրն պատիվ էր կանչել, տարել խաբով տներն Ա (1)-ին (իմա՝ յուրաքանչյուրին – Ա.Ա.) դոճաղ էր տվել, գիշերըն յամենքրն, ուր տան դոճաղըն սպանել ին»] [25, վավ. 278, էջ 187]:

reconciled. Melikbashi's son invited Qanlu Shaban to a banquet of honour in his village. Shaban went to the banquet with 300 Armenians. Melikbashi's son had previously made the following arrangement with his villagers: He himself would take Qanlu Shaban and a few of his men to his own house, while his villagers would divide the remainder of Shaban's men amongst themselves, each taking 5 or 6 to his house. He had given orders that when they heard a gun fired, each man was to kill the guests in his house. In this way they murdered this poor newly-promoted Armenian *yüz-bashi* and his 300 men, almost in the same way as the Khivans had killed Bekovich» [43, էջ 63]:

⁹ Նամակը գրված պետք է լիներ 1724 թ. հուլիսի երկրորդ կեսին կամ օգոստոսին, որովհետև նրանում նշվում է, որ օսմանյան բանակն այդ ժամանակ պաշարել էր Երևանը և ավերել շրջակա գյուղերը՝ «[Երևանի] քաղաքին (=մոտակա) զեղարենքն չափմիշ արարել» [25, վավ. 278, էջ 188]: Երևանի պաշտպանությունը տևել է 1724 թ. հունիսի 24-ից մինչև սեպտեմբերի 23-ը [3, էջեր 93-100; 7, էջեր 127-170]:

Նույն դեպքն ակնարկված է Իվան Կարապետի այլ գրություններում: Այսպես, 1724 թ. հունվարին կամ փետրվարի սկզբին գրված մի նամակում, նկարագրելով Ղարաբաղում ստեղծված խառնակ իրավիճակը, նա նշում էր, թե՛ «մեկը մյուսին չեն ենթարկվում, քանի որ իրենց գլխավորներին սպանել են, ներկայումս առանց դեկավար են» [*«մին ըզմինոյ թարբ չեն, չուն առաջի գլխաոր մարդիքրն ուրենք սպանել ան, յադայ առանց գուխ ան»*] [25, վավ. 210, էջ 69; հմմտ. 1, վավ. 13, էջ 156]:

1724 թ. մարտի 4-ին Իվան Կարապետը դարձյալ հիշում էր տեղի ունեցած ողբերգությունը.

«Այս հայերի վիճակն այսպիսին է. հայերը սպանել են իրենց գլխավորներին: Նախկին գլխավորները երկիրը բաժանել էին: Այսօր երկու մարդ կա նրանց մեջ, որ այդ անցած դեպքերից երկպառակվել են, համերաշխ չեն միմյանց հետ՝ կռվի են բռնվում, քանի որ գլխավոր չունեն»:

[*«Էս Հայերին աֆալն էս այ. Իսայերն տվել ան ուրենց գլխավորն սպանել ան, յառէնէ գլխաորն երկիրն բաժանել ան, էսօր Բ (2) մարդ կայ էստոնց միջուն, որ յառաջմէ բաժանած են, դարբոյ չեն ուրենց միջումն, կռիվ ան առում չուն գլխայրոր չունեն»*] [25, վավ. 219, էջ 78]¹⁰:

Ակնարկված դեպքերից հետո երկպառակված երկու գլխավոր դեմքերը, որոնց անուններն Իվան Կարապետը չի տալիս, ըստ ամենայնի, Ղարաբաղի Հայոց Սղնախներում 1722-1723 թթ. ձևավորված հակադիր ռազմաֆեոդալական ճամբարների առաջնորդներն էին. մեկը Ղարաբաղում շիրվանցի հայ ռազմիկների ստեղծած ինքնուրույն իշխանապետության ղեկավար Ավան-յուզբաշին էր, մյուսը՝ Գյուլիստանի, Ջրաբերդի և Վարանդայի մելիքների «հակաշիրվանյան» խմբավորման գաղափարական պարագուխը, որի տակ այստեղ, հավանաբար, հասկացվում է նույն մելիք Բաղերին:

Անուղղակիորեն նույն իրադարձությունն է հաստատում նաև Ավան-յուզբաշու և նրա զինակից շիրվանցի մի քանի յուզբաշիների՝ 1724 թ. հունվարի 5-ին «Շոշի սղնախ»-ում հաստատած վստահագիրը, որով նրանք պարտավորվում են վնաս չտալ մելիք Բաղերին և մոռանալ իրենց թշնամությունը (առանց անդրադառնալու դրա բուն պատճառներին), եթե միայն նա Իվան Կարապետի ուղեկցությամբ գա իրենց սղնախ՝ հաշտվելու և ընդհանուր ազատագրական դրոշի տակ կանգնելու նպատակով:

«...երբ [ռուսաց ցարի] պատվիրակ բեկը (Իվան Կարապետը) մելիք Բաղերին բերի մեր սղնախը (=ամրոցը) կամ ուր էլ բերի, եթե մենք մելիքին սպանենք կամ կալանենք կամ նեղություն պատճառենք, թող մեր կյանքը և ունեցվածքը թագավորին (իմա՝ Պետրոս Մեծին – Ա.Ա.) անցնի ու մենք մեղավոր ճանաչվենք...»¹¹

...քանի որ պատվիրակ բեկը մելիք Բաղերին բերում է մեզ հետ հաշտեցնելու համար, ուրեմն անցյալում եղածն այլևս չենք հիշելու, իսկ եթե հիշենք, այդ դեպքում թող մեզ մեղավոր ճանաչեն»:

[*«...որ Էշի բեկն (իմա՝ Իվան Կարապետը – Ա.Ա.) մելիք Բաղերն բերի մեր սղնախն, և թէ ինչ տեղ որ բերի, թէ մելիքին սպանենք կամ բռնենք, և թէ նեղություն տանք, մեր գուխն և մեր սպրանքն թագաւորին լինի և մեք գոնախկար լինենք...*

...որ մելիք Բաղերին Էշի բեկն բերում այ, որ մեզ խետ բարըջացունելէ (=հաշտեցնելու) խամար, որ ինչ օր յառէնէ ելել ա, էլ յիշենք ոչ, թէ յիշենք՝ գոնախկար լինենք»] [25, վավ. 198, էջ 56]:

Վստահագրի այս տողերից նույնպես հետևում է, որ մինչ այդ տեղի էր ունեցել այնպիսի ծանր միջադեպ, որի պատճառով շիրվանցի ռազմիկները, համընդհանուր կարծիքով, չէին վարանի մելիք Բաղերին պատժել, եթե նա իրենց ձեռքն ընկներ: Հասկանալի է նաև, որ այդ միջադեպը Ավետարանոցում շիրվանցի ռազմիկների սպանողն էր:

Փոքր-ինչ շեղվելով քննարկվող թեմայից՝ հարկ է նկատել, որ շիրվանցիներն ու մելիք Բաղերն հաշտության են եկել միայն մեկ տարի անց՝ 1725 թ. սկզբին, իսկ մինչ այդ միաբանման նպատակով մելիք Բաղերին ուղղված Իվան Կարապետի և շիրվանցիների երեք նամակառաջարկությունները, փաստորեն, մերժվել են [25, վավ. 205, էջ 63]: Մելիք Բաղերը հայ ազատագրական ուժերին չի միացել, այլ շարունակել է հավատարմություն պահպանել Սեֆյան իշխանության մնացորդների նկատմամբ՝ ի դեմս Իրանի հյուսիսում դեգերող շահ Թահմասպ Բ-ի (1723-1732): Ճիշտ է, Իվան Կարապետի այն նախագրուշացումից հետո, թե հայոց գորքը ռուսների մեծ պաշարով կգա ու հիմնովին կքանդի նրա բերդը, մելիք Բաղերը 1724 թ. փետրվարի սկզբին առերես հնազանդվել է նրան և պատրաստակամություն հայտնել միանալու:

¹⁰ Աշ. Հովհաննիսյանն այս տեղեկության բացատրությունը դժվարացել էր գտնել (տե՛ս [24, էջ LIX], որտեղ, բացի № 219 փաստաթղթից, հղվում է նաև № 278 փաստաթուղթը, որն առհասարակ նման տեղեկություն չունի):

¹¹ Այդ ժամանակ Ավան-յուզբաշին և Արցախի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների մեծ մասը վստահ էին, որ ռուսաց զորքերը մերձկասպյան շրջաններից շարժվելու են դեպի արևմուտք և, հայկական բազմահազարանոց նորաստեղծ զինուժի օժանդակությամբ, ազատագրելու են Արևելյան Հայաստանը:

ընդհանուր ազատագրական ճակատին [25, վավ. 207, էջ 66]: Բայց արդեն 1724 թ. փետրվարի 24-ին՝ Իվան Կարապետից ստացված տեղեկությունների հիման վրա, Մարտիրոս վարդապետը հայտնում էր, թե նա իրականում իր նախկին դիրքորոշումը չի փոխել. «Մելիք Պաղի թոռներ մելիք Պաղրո կանա Կարմիր աչքի (իմա՝ Սեֆյանների – Ա.Ա.) կողմն է» [25, վավ. 214, էջ 72]:

1724 թ. մարտի 20-ին մելիք Բաղերը ևս մեկ անգամ է հայտարարում ռուսաց ցարի պատվիրակ Իվան Կարապետի ղեկավարությամբ ու միջնորդությամբ Ղարաբաղում կառուցվող ազատագրական ընդհանուր ճակատին իր միանալու մասին [25, վավ. 233, էջեր 91-92]: Բայց այդ խոստումն էլ է կարճ կյանք ունենում. սկսած 1724 թ. ապրիլից մինչև առնվազն հուլիս ամիսը մելիք Բաղերն ու նրան դաշնակցած Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքները՝ Եսային ու Սարգիսը, մի քանի անգամ ասպատակում են Խաչենում և Վարանդայում շիրվանցիների վերահսկողության տակ գտնվող գյուղերը [25, վավ. 278, էջ 187]:

Վերադառնանք գլխավոր հարցի քննությանը:

Գիլանենցի հաղորդումը հնարավորություն է ընձեռում ճշտելու Ավետարանոցում կատարված ռճրագործության մոտավոր ժամանակն ու հիմնական հանգամանքները: Եվ այսպես, 1723 թ. օգոստոսի 20-ին Գիլանենցի լրատուն՝ դափանցի Հարությունը, վերոբերյալ տեղեկությունը Թավրիզից հասցրել էր Ռեշտ, որտեղ և գտնվում էր Գիլանենցի ջոկատի շտաբը: Այդ խառնակ ժամանակներում Թավրիզից Ռեշտ նա կարող էր հասնել մոտավորապես կես ամսում, իսկ Ղարաբաղից Թավրիզ Ավետարանոցի սպանդի մասին լուրը նրան կարող էր հասնել 1-2 ամսում: Հետևաբար, **դեպքը տեղի է ունեցել 1723 թ. մայիսից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում, առավել հավանական է՝ հունիսին**¹²:

¹² Բաֆֆին շտապողականորեն է խիստ անփութորեն է օգտագործել սկզբնաղբյուրը՝ Գիլանենցի օրագրությունը՝ սխալ որոշելով և՛ քննվող դեպքի ժամանակը, և՛ գործող դեմքերին: Շիրվան-յուզբաշին, ըստ նրա, «դափանցի Ղանլու-Շաբան անունով հայ իշխանն» էր (այնինչ դափանցին, ինչպես վերը տեսանք, Գիլանենցի լրատուն էր՝ Հարությունը), իսկ Ավետարանոցի սպանդն էլ իբր 1723 թ. օգոստոսի 20-ին էր (այնինչ այդ օրը դափանցի Հարությունը Թավրիզից հասել էր Ռեշտ, ապա Գիլանենցին հաղորդել Ավետարանոցում կատարվածի մասին): Բացի այդ, դավադրությունը Բաֆֆին վերագրում է «Մելիք-Բաղիի որդի Մելիք-Միրզա-բեկին» [21, էջեր 452-453]: Այնինչ, ինչպես վերը ցույց տրվեց, շիրվանցիների սպանության գլխավոր կազմակերպիչն ու պատասխանատուն Վարանդայի մելիք Բաղերն էր, թեև չի բացառվում, որ այդ սև գործում իր դերն է ունեցել նաև մելիք Միրզա-բեկը, ով իսկապես մելիք Բաղերի որդին էր (տե՛ս [11, էջ 149]):

Գիլանենցի գրի առած հաղորդման մյուս հատվածները ևս ճշտման կարիք ունեն: Նախ, Ավետարանոց գյուղը Դիզակում չէր, ինչպես նշված է Գիլանենցի օրագրությունում, այլ Վարանդայում¹³: «Մելիք Բաղիի տղան» (կամ թոռը) ոչ այլ ոք էր, եթե ոչ մելիք Բաղերը, ում նստավայրը հենց Ավետարանոցն էր: Ավետարանոցի բերդին էր վերաբերում նաև Իվան Կարապետի այն ծանուցումը, թե մելիք Բաղերը «*փոքր մարդով բերթ ունի, մեր մեծին* (իմա՝ ռուսաց ցարին – Ա.Ա.) *թաքէ* (=հնազանդ) *չէ, դառնան դարբաշին այ ուզում, մտել այ բերթին մէջն...*» [25, վավ. 205, էջ 63; հմմտ. վավ. 206, էջ 65]:

Կարևոր է ճշտել նաև, թե ով էր Պետրոս դի Սարգիս Գիլանենցի գեկուցագրում, իսկ ավելի ստույգ՝ նրա հրատարակված տարբերակում հիշատակված Ղանլու Շաբանը (Շապան): Այդպիսի անվամբ նշանավոր հայ յուզբաշի չի հանդիպում ո՛չ 1720-ական թվականներից մեզ հասած բազմաթիվ վավերագրերում, ո՛չ էլ Եսայի կաթողիկոսի «Պատմություն»-ում: Այս առումով պետք է հիշել, որ Գիլանենցի օրագրության հրատարակությունն ունի բազմաթիվ թյուրըմբերումներ ու վրիպակներ, որոնցից մի քանիսը նկատել է այդ արժեքավոր աղբյուրի անգլերեն թարգմանության հեղինակը՝ Կ. Մինասյանը, մեկ կարևոր դեպքում էլ՝ Աշ. Աբրահամյանը, ով «մելիք Բաչու»-ն իրավամբ ուղղել է «մելիք Բաղու»-ի [43, էջ XXI; 1, էջ 42]: Արդ, Գիլանենցի օրագրության դեռևս չհայտնաբերված ձեռագիր բնագրում¹⁴ Շաբանի փոխարեն, անկասկած, գրված է եղել «Շրուան» (Շիրվան, Շրվան), որն էլ կա՛մ հրատարակության համար հիմք հանդիսացած պատճենում, կա՛մ տպագիր հրատարակությունում սխալմամբ ընթերցվել է «Շաբան»: Շիրվան-յուզբաշին ամենանշանավոր շիրվանցի հրամանատարներից էր, ով 1722 թվականից ի վեր մեծ դերակատարում էր ունեցել Ղարաբաղում սկիզբ առած հայոց զորքերի կազմավորման գործում և ինքնապաշտպանական կռիվներում: Նա այն չորս գլխավոր զորապետներից էր, ովքեր, ըստ Եսայի կաթողիկոսի, կանգնած էին նորաստեղծ հայկական զորքերի գլխին տակավին 1722 թ. աշնանը՝ «*չորս գլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց անուանքն են Աւան, Շրուան, Շահնի, և Սարուխան, որ և սորա հարիւրապետ և իւզպաշիք կոչելին*» [12, էջ 47]: Շիրվանին Արցախում կազմավորված հայոց զորքերի ամենաառաջին հրամանատարներից է

¹³ Աշ. Աբրահամյանը, հետևելով Գիլանենցին, ինքն էլ Ավետարանոցը վրիպմամբ նշել է Դիզակի մելիքության կազմում [1, էջ 42]:

¹⁴ Գիլանենցի օրագրությունը հրատարակվել է բնագրի պատճենից, բայց ո՛չ այդ պատճենը, ո՛չ բուն բնագիրը, ո՛չ էլ դեռևս 1723-1724 թթ. կատարված ռուսերեն թարգմանությունը ցայսօր հայտնաբերված չեն և գիտնականների ձեռքը չեն անցել: Ըստ ամենայնի, բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը գտնվում են ռուսական դիվաններում:

կոչում նաև Երից Մանկանց Ներսես կաթողիկոսը՝ «Շրուանն, Գրիգորն, Սարուխանն, Աւանն ուզապաշիք» [25, վավ. 175, էջ 27]:

Վերջին անգամ Շիրվան-յուզբաշին դիվանային վավերագրերում հիշատակվում է 1723 թ. մարտին՝ Գյուլիստանի (Պարտավի) մելիք Եսայու, Գանձակի մելիք Հովսեփի և Ջրաբերդի մելիք Սարգսի հետ միասին՝ որպես Ջրաբերդ-Գյուլիստան միացյալ սղնախի գլխավոր հրամանատարներից մեկը [25, վավ. 177, էջ 29]: Այնուհետև նրա մասին տեղեկություններն ընդհատվում են, որը կարելի է բացատրել միայն նրա այլևս կենդանի չլինելու հանգամանքով¹⁵:

Կա ևս մեկ տեղեկություն, որից հետևում է, որ Ավետարանոցում սպանված շիրվանցի ռազմիկների հրամանատարը Շիրվան-յուզբաշին էր: Խոսքը վերաբերում է դեպքից վեց տասնամյակ անց՝ 1783 թ. հունվարի 28-ին, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մի ծանուցմանը, ըստ որի՝ իբր 1722-1723 թթ. Շիրվանին հայերն ընտրել-նշանակել են թագավոր, այնուհետև՝ սպանել նրան.

«...և իրենց միջից մեկին կարգեցին թագավոր և անվանեցին նրան Շրվան շահ, այնուհետև, միմյանց նկատմամբ անմիաբանություն դրսևորելով, սպանեցին իրենց նորընծա շահին և իրար դեմ պատերազմեցին»:

[«...և ի մէջ իւրեանց նստուցին զոմն իբր թագաւոր և անուանեցին զնա Շրուան շահ, ապա անմիաբան լեալ ի մէջ իւրեանց սպանին զնոր նստուցեալ շահն իւրեանց և ընդ իրեարս պատերազմեցան...»] [26, վավ. 131, էջ 211]:

Թեև Շիրվանին կամ որևէ ուրիշին 1720-ական թթ. հայոց թագավոր նշանակելու մասին այս հաղորդումը, ինչպես նաև դրան կից Հովսեփ Արղությանի ներկայացրած տեղեկություններից մի քանիսը բացահայտորեն չեն համապատասխանում պատմական իրականությանը¹⁶,

¹⁵ Եվս մեկ անգամ Շիրվանը՝ Ավան և Սարուխան յուզբաշիների և Եսայի, Սարգիս և Գրիգոր մելիքների հետ միասին հիշատակված է 1723 թ. հունիսին Ս. Պետերբուրգում՝ Ռուսաստանի արտաքին գործերի պետական կոլեգիայում, Իվան Կարապետին տրված հուշագրում [25, վավ. 185, էջ 40]: Պարզ է, սակայն, որ Շիրվանի սպանության լուրը այդ ժամանակ Ս. Պետերբուրգ հասնել չէր կարող (հնարավոր է նաև, որ նա այդ պահին դեռևս չէր սպանվել):

¹⁶ Հ. Արղությանն ավելացնում է, թե իբր Շիրվանին հայերը թագավոր են ընտրել անմիջապես այն բանից հետո, երբ 1722 թ. Կուրի ափին Պետրոս Մեծին սպասող 18000-անոց հայկական զորքը, լսելով ռուսաց ցարի իր երկիրը վերադառնալու մասին, հետ է դարձել, ջարդել Արևելյան Հայաստանը ռազմակալած օսմանյան բանակին և վանել նրան «ի Ղարաբաղու, ի Ղարանու և ի Սիսիանու» [25, վավ. 131, էջ 211]: Այս անհիմն տեղեկությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ 1720-ական թթ. Սյունիքում և Արցախում օսման-

բայց այն պարզորեն համահունչ է հայերի ձեռքով 1723 թ. շիրվանցի երևելի հրամանատարին կամ հրամանատարներին սպանելու մասին Գիլանենցի և Իվան Կարապետի վերոբերյալ հաղորդումներին: 1722-1730 թթ. Ղարաբաղում եղբայրասպանության նույնանման այլ դեպք չի արձանագրվել, ուստի բոլոր հիմքերը կան եզրակացնելու համար, որ 1723 թ. հունիսին Ավետարանոցում սպանված շիրվանցիների գորագույնը եղել է Շիրվան-յուզբաշին: Իսկ Հ. Արղությանին նրա սպանության մասին տեղեկությունը հասած պետք է լինել կամ իր ձեռքի տակ հայտնված՝ 1720-ական թթ. Ղարաբաղի Սղնախների և ռուսների միջև գրագրությունից, կամ Ռուսաստանում հաստատված սղնախցի հայ հրամանատարների ու նրանց ընտանիքների անդամների պատմածից: Այս առումով առավել ստույգ եզրակացություն կարելի է անել՝ հիշելով, որ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի օրագրության բնօրինակը կամ պատճենը պատկանել է հենց Հ. Արղությանին, ում այն անցել էր Մինաս արքեպիսկոպոս Տիգրանյանի դիվանային որոշ նյութերի հետ միասին [8, էջ 81-82. հմմտ. 43, էջ XX]:

Ամենայն հավանականությամբ, Շիրվանին թագավոր նշանակելու մասին կեղծ տեղեկությունը բխում է «նորընծա Խոսի ուզբաշի Ղանկու Շիրվանի» մասին Գիլանենցի վերոբերյալ հաղորդման (հատկապես «նորընծա» բառի)՝ Հ. Արղությանի հանպատրաստից և սխալ բացատրությունից: Այնինչ Գիլանենցը՝ «նորընծա Խոսի ուզբաշի» ասելով, վատահարաբ, նկատի է ունեցել ընդամենը Շիրվան-յուզբաշու հրամանատարական դիրքի կամ պաշտոնի նշանակալից բարձրացումը: Դատելով Ավետարանոցում դավադրաբար սպանված հրամանատարների թվից՝ 47 կամ 55 հոգի, պետք է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է 1722-1723 թթ. Վարանդա գավառում կազմավորված հայկական մոտ 5-6-հազարանոց զորքի շիրվանցի հարյուրապետներին՝ *յուզբաշիներին*, որոնց մեծ մասն էլ հրավիրված է եղել եղերական խնջույքին: Հարկ է հիշել, որ տակավին 1699 թ. Իսրայել Օրին Վարանդայի հայության զորահավաքային ներուժը հաշվում էր 6000 հոգի [41, վավ. 9, էջ 35-36; 6, էջ 45], մինչդեռ 1724 թ. հունվարին Վարանդայի զգալի մասն ընդգրկող Շոշի սղնախում գումարվել էր արդեն 6900 հայ զինվոր [25, վավ. 199, էջ 57; 27, էջ 162; 6, էջ 76-80]: Հետևաբար, Շիրվան-յուզբաշին այդ ժամանակ նոր է նշանակված եղել Վարանդայի հայոց զինուժի գլխավոր հրամանատար, քանի որ մինչ այդ, ինչպես վերը նշվեց, նա գործում էր Գյուլիստանում ու Ջրաբերդում: Ահա սա է նրա

յան բանակների հանդեպ հայոց զորքերի տոնած մի շարք խոշոր իրական հաղթանակների աղճատված արձագանք:

մասին Գիլանենցի գործածած «հայերի նորընծա յուզբաշի» արտահայտության նշանակությունը:

Տասնամյակներ անց Հ. Արղությանի արած սխալ և ազատ մեկնությունը նպաստած պետք է լինեին Իվան Կարապետի՝ Ղարաբաղում «գլխավորն» սպանելու մասին վերոբերյալ հաղորդումները, որոնց Արղությանը, ըստ երևույթին, նույնպես ծանոթ է եղել՝ «գլխավորն» բառը թուրքմբռնելով որպես «թագավոր» կամ «շահ»: Այս թուրքմբռնություններն էլ հասցրել են նրան «Շրուան շահ» վերոհիշյալ արտառոց մեկնությանը: Իրականում հայ ռազմիկների «գլխավորն» սպանելու մասին Իվան Կարապետի տեղեկությունն ունի ոչ թե եզակիի, այլ հոգնակիի իմաստ. ինչպես Իվան Կարապետը հստակեցրել է իր վերոբերյալ նամակներից մեկում, խոսքը վերաբերում է ոչ թե մեկ գլխավոր անձի, այլ մի քանի «գլխավոր մարդկանց» («գլխավոր մարդիքը») սպանելուն: Այնուամենայնիվ, վերոհիշյալ բոլոր թուրքմբռնություններով ու թուրքմբռնումներով հանդերձ, Հովսեփ Արղությանը ճիշտ է կարդացել Գիլանենցի բնագրում Շիրվանի անունը՝ ոչ թե «Շարան»/«Շապան», այլ՝ «Շրուան»:

Ինչ վերաբերում է Շիրվան-յուզբաշու «Ղանլու» մականվանը, ապա այն ծագում է թուրքերեն «kanlı»-ից (թրք. «kan»=արյուն), որը նշանակում է «արյունաբեր», «վայրենի», «կատաղի», իսկ Ղարաբաղի բարբառում՝ նաև «մարդասպան» («մըրթըսպան») իմաստը [20, էջ 451]: Մակարեբելի է, որ Շիրվան-յուզբաշին այդ մականունը ստացել է զինվորական ծառայությունում և պատերազմական գործողություններում դրսևորած խիստ և անողորք բնավորության պատճառով:

Մյուս կարևոր հարցն այն է, թե որքան է եղել Ավետարանոցում սպանված շիրվանցիների ջոկատի թվաքանակը: Ըստ Գիլանենցի լրատու դափանցի Հարությունի՝ նրանց թիվը 300 էր, իսկ ըստ Իվան Կարապետի՝ 47 կամ 55 հոգի: Նախապատվությունն այս հարցում պետք է անվերապահորեն տրվի Իվան Կարապետին, որովհետև, թեև նա ժամանել էր Ղարաբաղ այդ դեպքից ավելի քան կես տարի անց՝ 1723 թ. դեկտեմբերի վերջին, ի տարբերություն դափանցի Հարությունի, նրան դեպքի մասին պատմել էին անմիջապես շիրվանցիների պարագլուխները՝ Ավանը, Թարխանը և մյուս յուզբաշիները, ովքեր արդեն անուն առ անուն պարզած պետք է լինեին, թե այդ եղերական օրը շիրվանցի զորականներից ով է Շիրվան-յուզբաշու հետ մեկնել Ավետարանոց, քանի որ, անշուշտ, անձամբ ճանաչում էին Արցախ եկած իրենց ռազմիկ համերկրացիներին: Եթե Ավետարանոցում իրոք սպանված լինեին 300 հոգի, ապա Ավանը, Թարխանը և նրանց շիրվանցի զինակիցներն Իվան Կարապետին

անայսման կհաղորդեին այդ ավելի մեծ թիվը՝ էլ առավել ընդգծելու համար մելիք Բաղերի դաճանության ծանրությունը: Նրանք սպանված շիրվանցիների քանակը դիտմամբ պակաս ներկայացնելու որևէ պատճառ չունեին:

Պետք է նաև ճիշտ հասկանալ Իվան Կարապետի քննվող հաղորդման այն հատվածը, ըստ որի՝ Ավետարանոցում սպանված բոլոր շիրվանցիները հրամանատարներ էին՝ «շիրվանըցոնց ԽԷ (47) գլխավոր մարդիքը» կամ «ԾԵ (55) մեծայնեմ Հայոց ուզբաշիքը»: Խոսքն այստեղ վերաբերում է շիրվանցի պրոֆեսիոնալ զինվորականներին, որոնցից ոմանք պարսկական բանակում մինչև 1722 թ. իրոք տարբեր աստիճանի հրամանատարական պաշտոններ են զբաղեցրել, բայց այդ 47-ի կամ 55-ի մեծ մասը նախկինում, ըստ ամենայնի, հասարակ զինվորներ են եղել Շամախիի խանի ավանդաբար հայերից բաղկացած զորագնդում կամ գուցե նաև այլ զորախմբերում¹⁷: Այդուամենայնիվ, 1722 թ. գալով Ղարաբաղ, նրանք հրամանատարներ պետք է նշանակվեին նորահավաք հայկական մեծաթիվ զորքերում, քանի որ ռազմական գործին տիրապետում էին անհամեմատ ավելի լավ, քան տեղում զինվորագրված հազարավոր գյուղացիներն ու արիեստավորները: Ղարաբաղի Մոնախների «մշտական» կամ գործող զինվորության շարքերում 1722 թ. վերջին եղել է շուրջ 20-30 հազար, 1723 թ. վերջից մինչև 1728 թ. կեսերը՝ մոտավորապես 40 հազար (տատանումներով հանդերձ), 1729-1731 թթ.՝ դարձյալ 20-30 հազար հայ մարտիկ [6, էջ 281-299]: Նման պայմաններում հրամանատարական կադրերի պակասը զորքերում շատ սուր պետք է զգացվեր:

Բացի Շիրվան-յուզբաշուց, մյուս ճանաչված շիրվանցի հրամանատարը, ով, մեծ հավանականությամբ, նույնպես սպանվել էր Ավետարանոցում՝ Շահնի-յուզբաշին է, ում Եսայի կաթողիկոսը հիշատակում է 1722 թ. աշնանը հայոց նորաստեղծ զորքի չորս գլխավոր հրամանատարների թվում՝ «չորս գլխավորք եղեալ երիտասարդացն, որոց անուանքն են Աւան, Շրուան, Շահնի, և Մարուխան, որ և տքա հարխրասպետ և իւզպաշիք կոչէին» [12, էջ 47]: Այդ հիշատակումից բացի, Շահնի-յուզբաշու անունն առկա բազմաթիվ պատմական վավերագրերում այլևս երբեք չի հանդիպում, որը և որոշակի հավաստիություն է հաղորդում այս ենթադրությանը:

* * *

¹⁷ 1636 թ. Ադամ Օլեարիուսը Շամախու մոտ ականատես է լինում պարսկական բանակի կազմում գործող հինգ գումարտականոց ու մեծ մասամբ հայերից բաղկացած ավելի քան 2000-անոց մի հետևակային գնդի զորահանդեսին [44, էջ 155; 36, էջ 526]:

Ինչպես վերը նշվեց, 1724 թ. ապրիլին Վարանդայի մելիք Բաղերը (որն այդ պահին իշխում էր միայն Վարանդայի Քոչիզ գավառակում, որի կենտրոնն Ավետարանոցն էր), նրա հետ դաշնակցած Գյուլիստանի մելիք Եսային ու Ջրաբերդի մելիք Սարգիսը՝ օգտվելով Ավան-յուզբաշու դեպի Ղափան՝ Դավիթ-բեկին օգնություն ցույց տալու նպատակով կատարած արշավանքից, հարձակումներ են գործում Շիրվանցիների արցախյան իշխանապետության կազմում հայտնված Խաչենի և Վարանդայի հայկական գյուղերի վրա [25, վավ. 278, էջ 187]: Եսային, Սարգիսն ու Արրահամ-յուզբաշին ասպատակում են Խաչենում Թարխան-յուզբաշուն, իսկ մելիք Բաղերը՝ Վարանդայում Ավան-յուզբաշուն ենթակա գյուղերը [25, վավ. 278, էջ 187]: Ըստ Իվան Կարապետի՝ բոլոր հարձակումներն էլ հեշտությամբ հետ են մղվում, մասնավորապես՝ Թարխան-յուզբաշու ուժերի հետ բախումներում 2-3 մարդ սպանվելուց հետո Գյուլիստան-Ջրաբերդի զորքն անմիջապես նահանջում է՝ ճանապարհին թալանելով Թարխան-յուզբաշուն ենթակա գյուղերը. «*Ֆիսիման այ, յեղ այ էրթում և ճանապարհին ինչ Հայի գեղ որ Թարխանին թաքէ այ* (=ենթակա է), *թալանում այ և տավարանին և ինչօր ձեռն այ ընկաման տանում այ*» [25, վավ. 278, էջ 187]: Նույնն է անում մելիք Բաղերը՝ ասպատակության անհաջողության մատնվելուց հետո «*փախնում է իր ամրոցը*» («*փախման ան ուրէնց դալէն*»): Ահա մի քանի չափազանց հետաքրքիր մեջբերում Իվան Կարապետի 1724 թ. հուլիսի երկրորդ կեսին գրած նամակից.

«Եսային... մելիք Բաղերի հետ դաշինք են կապել, թե՛ «մենք մեր երկրում (իմա՝ Ղարաբաղում – Ա.Ա.) բոլոր շիրվանցիներին պետք է կոտորենք ու մեր երկրից դուրս քշենք, երկիրն էլ մենք իշխենք ու վայելենք»...

Այնինչ հենց այս շիրվանցի տղաներն են այս նահանգը (իմա՝ Ղարաբաղը – Ա.Ա.) մահմեդականների լծից ազատել (Ղարաբաղը): Թարխան-յուզբաշին չի ուզում կռիվ անել և մարդ կոտորել: Նա ասում է. «**Հայ են, ես ինչպե՛ս կարող եմ նրանց կոտորել**»: Իսկ եթե ցանկանար՝ մեկ օրում կկոտորեր:

Եվ այս երկրի հասարակ ժողովրդի կեսը ցանկանում է պահպանել շիրվանցիների իշխանությունը՝ ասելով, թե՛ «նրանք են մեզ անհավատներից (իմա՝ մահմեդականների լծից – Ա.Ա.) ազատել», իսկ մյուս մասն ասում է, թե՛ «սա մեր երկիրն է, մենք կիշխենք ու կվայելենք, դուք ո՛վ էք»:

Շիրվանցիների ձեռքը չի բարձրանում մարդ սպանել կամ թալանել:

Եվ այս դարաբաղցիների ուժը չի պատում, որպեսզի շիրվանցիներին սպանեն կամ դուրս քշեն այս նահանգից: Բայց եթե, դիցուկ, այսօր շիրվանցի ռազմիկները դուրս եկան այս նահանգից, վաղն անհավատները (իմա՝ մահմեդականները – Ա.Ա.) այն կգավթեն և [ժողովրդին] կգերեվարեն»:

[«Եսային... մելիք Բաղերին հետ դովան տվել, թե՛ մեք մեր երկրումս որչանք որ շիրվանցի կայ, կատորենք, և թե՛ մեր երկրեն դուս առենք, երկիրն մենք ուտենք»...]

«Եւ էս Շիրվանայ տղէքրն ան էս երկիրս Քորդի (իմա մահմեդականների՝ Ա.Ա.) ձեռնէ ազատել և Շիրվանայ տղէքրն: Թարխան ուզբաշին ուզում չէ կռիվ առելն և մարդ կոտորելն. **Ասում այ, թե՛ Հայ են, ես դո՛ր կոտորէմ: Եւ թե՛ ուզի, Ա (1) օրումն կէկատորի...**

Եւ էս երկիրս ըռայաթին կէսն (=«հպատակների», այն է՝ հասարակ ժողովրդի կեսը) շիրվանրցին այ ուզում. ասում այ, թե՛ «մեզ անհավատից ազատել այ», և փարային (=մյուս մասն) ասում ան, թե՛ «մեր երկիրն այ, մեք կոտենք, դոք օ՛վ էք...»:

Շիրվանրցին դիմիչ չէ անում մարդ սպանել կամ թալանել:

Եւ էս Ղարաբաղայ խաղին ղոյաթրն հասնում չեն շիրվանրցոնց սպանի կամ դուս անի էս երկրէս: Եւ թե՛ շիրվանրցին էս երկրէս, թե՛ էսօր դուս գն[ա]լց, յէքսրն անհավատրն գէգայ էս երկիրս գէգաֆթի և եսիր կանի» (ընդգծումը՝ Ա.Ա.) [25, վավ. 278, էջ 187]:

Ինչպես տեսնում ենք, ստեղծված բարդագույն իրավիճակում շիրվանցի հայ զորավարները դրսևորում են ազգային ինքնագիտակցության և քաղաքական հասունության բարձր մակարդակ: Նրանք չեն պատասխանում Վարանդայի, Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքներին հակահարձակումներով ու խոշորածավալ ռազմական գործողություններով (թեև ունեին դրա կարողությունը)՝ իրենց զսպվածությունը հիմնավորելով եղբայրասպանության անթույլատրելիությամբ, Թարխան-յուզբաշու բառերով ասած՝ «*հայ են, ես ինչպե՛ս կարող եմ նրանց կոտորել*»: Այսպիսի արտահայտիչ ազգասիրությունը կարելի է բացատրել միայն Ավան-յուզբաշու, Թարխան-յուզբաշու և նրանց մերձավոր զինակիցների խոր գաղափարականացվածությամբ՝ հայ ազգային-ազատագրական գաղտնի շարժմանն ու նրա նպատակներին դեռևս մինչև 1722 թ. գիտակցորեն միանալու և նվիրվելու բերումով: Շիրվանցի այդ ռազմական գործիչների՝ հայոց ազատագրական շրջանակների հետ վաղեմի կապերի անուղղակի, բայց ցցուն վկա-

յութունն են 1722 թ. գարնանը Սեֆյան բանակից նրանց հեռանալը, Արցախի ժամանելը, այնտեղ ինքնապաշտպանական ուժերի կազմավորման ստանձնումն ու ղեկավարումը, ինչպես նաև նույն թվականի հունիսին Զալբալի-բեկի գործի դեմ ձեռնարկված գիշերային հարձակումը [22, էջ 176-200]¹⁸: Այս իրարահաջորդ գործողությունները չէին կարող կատարվել հանպատրաստից՝ 1-2 ամսվա ընթացքում: Դրանք պահանջում էին երկարատև նախապատրաստում, մասնավորապես՝ խիստ գաղտնապահության պայմաններում համատեղ որոշումների ընդունում, Ղարաբաղի մելիքների և հոգևոր առաջնորդների հետ գաղտնի հաղորդակցության պահպանում, փոխվստահության ձեռքբերում, հայ ռազմիկների ընտանիքների ապահով դուրսբերում Շիրվանից Ղարաբաղ, ծրագրերի համաձայնեցում: Այս ամենը ոչ թե ամիսների, այլ տարիների ընթացքում լուծելիք հարցեր էին:

Արցախում հաստատված շիրվանցի հայ զորահրամանատարներն իրենց գաղափարաբարոյական կերպարով նմանվում-նույնանում էին Սյունիք ժամանած վրաստանցի հայ զորահրամանատարներին, որոնցից մի քանիսին անձամբ ճանաչած մխիթարյան միաբան Ղուկաս Սերաստացին բնութագրում էր այսպես.

«[Նրանք] այրեր էին, ուլքեր չարչարվել ու տառապել էին այլազգիների դառը ծառայության ներքո, այրեր՝ ուլքեր իրենց կյանքն էին դրել այլազգիներին ծառայելու լծից ազատվելու համար»:

[«...արք... որք նեղեարք և տառապեալք էին ի դառն ծառայութենէ այլազգեաց, արք՝ որք զանձինս իրեանց եղեարք էին առ ի ազատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն այլազգեաց»] [10, էջ 149-150]:

Դատելով այս և մի քանի այլ հաղորդումներից, Դավիթ-բեկի և նրա զինակիցների, ինչպես նաև, փաստորեն, շիրվանցի հայ հրամանատարների մտայնության մեջ պարզորեն ներթափանցել էին հին և միջնադարյան հայ զինվորականության արժեհամակարգային դրույթները [6, էջեր 485-486. 5, էջ 13], որոնց վերակենդանացումը բնականորեն բխում էր ինչպես հայ (մինչև 1722 թ. ընդհատակյա) ազատագրական շարժման գլխավոր նպատակից՝ Հայաստանի և հայության ազատագրումից, այնպես էլ նրա հին գործիչների ընդունած, ըստ ամենայնի, հիմնականում նույնական բովանդակություն ունեցող կանոնակարգված երդումից¹⁹:

Շիրվանցի զորագլուխների ազգասիրությունն ու մեծահոգությունն ի վերջո տալիս են իրենց պտուղները: Մեկ տարի անց՝ 1725 թ. մարտին Ավան-յուզբաշու և մելիք Բաղերի ուժերը (Ավան-յուզբաշու ընդհանուր ղեկավարությամբ) միասնաբար իրականացնում են Վարանդա մտած 4700-հոգանոց օսմանյան հեծյալ կորպուսի շարդը [6, էջեր 76-79. 22, էջեր 193-195]: Փաստորեն, շիրվանցիների վերջնական հաշտեցումը Վարանդայի մելիք Բաղերի հետ տեղի է ունեցել ամենաուշը 1725 թ. սկզբներին, իսկ մարտի 3-ին իրականացված համատեղ ռազմագործողությամբ այն արդեն ամուր հիմքերի վրա է դրվել: Այդ մասին շատ հստակ ասված է Եսայի Հասան-Չալայանի, Ղարաբաղի հայ զորահրամանատարների ու մելիքների 1725 թ. մարտի 10-ին՝ Վախթանգ Զ-ին և Շահնավազ խանին հղված նամակում.

«Որքան գժտվածներ ունեյինք՝ թե մելիքներից, թե հրամանատարներից, բոլորս միաբանվեցինք ու հաշտվեցինք. մեր մեջ այլևս մասնատվածություն չկա»:

[«...մեր մէջս որքան խռով մարդ կայր՝ թէ մելիքներ, թէ ուզապաշիք, ամենն մին եղանք, պարիշեցաք, այլ ջոկույթին չկա»] [25, վավ. 310, էջ 236]:

1725 թ. հուլիսին մելիք Բաղերին դարձյալ տեսնում ենք հակաօսմանյան դաշինքի շարքերում՝ Ավան-յուզբաշու, Թարխան-յուզբաշու, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Չալայանի ու Երից Մանկանց կաթողիկոս Ներսեսի (հետևաբար՝ նաև նրա հետ մշտապես միասին հանդես եկող Գյուլիստանի և Ջրաբերդի աշխարհիկ առաջնորդների) հետ միասին [6, վավ. 315, էջեր 248-250]: Այս դաշինքն այդուհետ ևս ուժի մեջ է մնացել, քանի որ Մելիք Բաղերը հիշվում է նաև դարաբաղյան ազատագրական նույն ճամբարում 1726 թ. նոյեմբերի 25-ին [25, վավ. 347, էջ 287]: Նույն 1726 թ. (ամիսն ու օրը չեն նշված) մելիք Բաղերը մի հնազանդության գիր է տվել Իվան Կարապետին՝ վերջինիս ռուսաց կայսեր պատվիրակ և հայ ազատագրական շարժման համակարգող գործիչ լինելու բերումով [25, վավ. 351, էջ 291]²⁰:

Մելիք Բաղերը 1730 թ. արդեն վախճանված պետք է լիներ, որովհետև այդ թվականի հունիս-հուլիսին արձակված իր մի հրովարտակում շահ Թահմասպ Բ-ը Վարանդայի մելիք է ճանաչում

¹⁸ Առավել մանրամասն տե՛ս առաջիկայում հրատարակվելիք «Հայոց գործն Արցախում 1722-1735 թթ. (կազմավորումը, զինումը և ճակատամարտերը)» մեր մենագրությունը:

¹⁹ Լինելով կատարյալ անակնկալ ժամանակակիցների համար՝ 1722 թ. ի վեր հայկական զինուժի սրբնթաց մուտքը

պատմական ասպարեզ իրականում գաղտնի նախապատրաստվել էր առնվազն նախորդող երկու տասնամյակների ընթացքում [4] (հայ ազատագրական շարժման ընդհատակյա գործիչների երդմնատվության մասին տե՛ս նույն հոդվածաշարի երրորդ և չորրորդ մասերը՝ #5 (214) և #8 (217)):

²⁰ Ա. Գ. Աբրահամյանը «մելիք Պաղոս»-ը սխալմամբ ընթերցել է «մելիք Պաղխ» [1, էջ 253]:

մելիք Հուսեինին, ով ևս դեկավար մասնակցություն էր ունեցել օսմանցիների դեմ կռիվներին [17, էջեր 168-169. հմտ. 16, էջ 358]: Ինչպես գրված է 1736 թ. մահացած մելիք Հուսեինի տապանաքարի վրա՝ «սա էր... թագ, պարձանք հայոց ազգի, յոժ կողորուսց ազգէն դանկի, պատերազմեաց յետ օսմանցի, սա ոչ էտ հարկ թագաորի, ամուր պարխայ էր աշխարհի» [11, էջ 149]²¹:

Ամեն դեպքում, թեև 1725 թ. սկզբներից ի վեր մելիք Բաղերի և շիրվանցի գորագույնների միջև կնքված հաշտությունը ամրապնդվել էր օսմանյան գորքերի դեմ համատեղ պայքարով ու այլևս չէր խախտվել ընդհուպ մինչև Ավանյուզբաշու և շիրվանցի երևելի հրամանատարների 1728-1730 թթ. Արցախից դեպի Ռուսաստան հեռանալն ու մելիք Բաղերի մահը, այդուամենայնիվ, 1723 թ. հունիսին Ավետարանոցում հայ ռազմիկների սպանությունն անշուշտ խոր և ցավոտ վերք էր թողել ազատագրական պայքարի մասնակիցների հիշողության ու հոգեկանի վրա:

Նույնօրինակ հատուկ ռազմագործողություններ (XVI-XXI դդ.)

1723 թ. հունիսին Ավետարանոցում խնջույքից հետո շիրվանցի հայ գորականների նենգաբարո սպանությունը գուտ ռազմական տեսակետից հանրաձանոթ, թեև հազվադեպ կիրառվող ոչ-ավանդական մարտավարական հնարք էր: Պատկերացնելու համար միայն իրանա-միջինասիական տարածաշրջանում նույնատիպ հատուկ ռազմագործողությունների տարածվածությունն ու մոտավոր հաճախականությունը, ստորև ներկայացնում ենք XVI-XXI դարերից մի քանի պատմական օրինակ՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:

1. [1590-ական թթ.] 1590-ական թթ. վերջերին Շահ Աբբաս Ա-ի (1587-1629) մեջ կասկած է առաջանում, թե Մարաղայի ժառանգական տիրակալ (*հաքիմ*)՝ քրդական *մուքրի* ցեղի առաջնորդ Կուրադ-խանն իրեն դավանանել է: Շահը, նախ, նրան իր 150-հոգանոց շքախմբով իր նստավայր է հրավիրում, ապա հրամայում է տեղում բոլորին կոտորել [38, էջ 108; 28, էջ 338]:

2. [1605 թ.] 1605 թ. մարտի 12-ին Կախեթի խան (արքա) Աղեքսանդր Բ-ը, նրա որդի Գորգին ու նրանց մի քանի հետևորդները, ըստ

Եվրոպական մի վստահելի աղբյուրի, սպանվում են հենց իրենց պատվին տված ճաշկերույթի ժամանակ: Այդ սպանությունը կազմակերպել էր Աղեքսանդր Բ-ի հավատուրաց որդի Կոնստանտինը [15, էջ 162]²²:

3. [1717 թ.] Առանձին անդրադարձի կարիք ունի միջինասիական Խիվայի խանությունում (նույնն է թե՛ Խորեզմի պետությունում) տեղի ունեցած այն դեպքը, որի հետ է համեմատում Ավետարանոցի նախնիքը Պետրոս դի Սարգիս Գիլանենցը՝ գրելով, թե շիրվանցի հայ ռազմիկների հետ «վարվեցին ճիշտ այնպես, ինչպես խիվացիները՝ [իշխան] Ազրեկովիչի հետ» [*«Էնպես ան արարել՝ դոր որ խիվիցիքքն Ազրեկովիճին արարին»*]: Գիլանենցի այս կարճատև բաղդատումը վկայում է, որ ժամանակակիցները լավաձանոթ էին 1717 թ. Խիվայում շուրջ 4000 ռուս զինվորների սպանությանը: Ռուսաստանում XVIII-XIX դարերում գործածական էր դարձել անգամ մի ասացվածք՝ «կորավ/զոհվեց, ինչպես Բեկովիչը» («пропал/погиб, как Бекевич») [33, էջ 303], որը մեծ փորձանքի մեջ ընկնել էր նշանակում: Իսկ Եվրոպայում այդ դեպքը 1721 թ. ի վեր արժարժվել էր մամուլի մի շարք հրապարակումներում [29, էջեր 9-10]:

Բեկովիչին վերաբերող Գիլանենցի հայտարարությանը հպանցիկ անդրադարձել է միայն նրա երկի անգլերեն հրատարակության խմբագիրը՝ անգլիացի նշանավոր իրանագետ Լորենս Լոքհարթը՝ չնշելով, սակայն, ո՛չ այդ դեպքի մանրամասները, ո՛չ էլ անգամ տարեթիվը: Նա ընդամենը ծանոթագրել է, որ Ռուսաստանից դեպի Հնդկաստան առևտրական ուղի բացելու հնարավորությունը հետազոտելու նպատակով Պետրոս Մեծը մերձկասպյան շրջաններ և Միջին Ասիա է ուղարկել ռազմական արշավախումբ՝ իշխան Ալեքսանդր Բեկովիչ-Չերկասկիի հրամանատարությամբ: Սկզբում ռուսական զորագունդը հաղթել է Խիվայի խանի (Խորեզմի պետության) գորքերին: Վերջինս առերես հպատակություն է հայտնել, ներքաշել ռուսներին քաղաք (Խիվա), որտեղ և գրեթե բոլորը սպանվել են [43, էջ 63 (ծնթ. 2)]: Սույն ուսումնասիրության համար, այդուամենայնիվ, օգտակար են նաև Բեկովիչի ռազմական արշավախմբի կործանման լրացուցիչ հանգամանքները:

Մեզ հետաքրքրող փաստերը, համառոտաբար, հետևյալն են: 1717 թ. օգոստոսին իշխան Բեկովիչ-Չերկասկին, վերցնելով իր 6655 հոգուց բաղկացած զորքից շուրջ 4000 զինվոր, որոշում է խորանալ դեպի Խիվա քաղաքը: Ճանապարհին նրանք ենթարկվում են Խիվայի խանի զորքի հարձակման, որը հաջողությամբ հետ է մղվում:

²¹ Այս տապանագրի խմբագրված-ձևախեղված տարբերակը հրապարակել է նաև Բաֆֆին՝ հետ և առաջ շրջելով տողերն ու տեղ-տեղ շտկելով ուղղագրությունը [21, էջ 441]: Ծանոթ լինելով տապանագրի գիտական ճշգրիտ հրատարակությանը, Ա. Մաղայանը, այնուամենայնիվ, անբացատրելիորեն նախապատվությունը տվել է Բաֆֆիի սխալներով լի ոչ բնագրային տարբերակին և այն նույնությամբ վերահրատարակել իր գրքում [17, էջ 169]:

²² Նույն դեպքի մասին պատմելիս վրացական աղբյուրը ճաշկերույթի դրվագը չի հիշատակում [32, էջ 143]:

Դրանից հետո Խիվայի տիրակալը որոշում է դիմել ռազմական խորամանկության: Նա դառնում է չափազանց սիրալիր, հպատակվելու ցանկություն է հայտնում, սակայն առաջարկում է ռուսական զորքին բաժանվել հինգ մասի, որպեսզի իբր կարողանա նրանց հինգ տարբեր քաղաքներում տեղավորել ու կերակրել: Բեկովիչ-Չերկասկին ստիպված համաձայնում է, քանի որ իր զորքն արդեն բավականին հյուծված էր ու ջրի պակաս ուներ: Ռուս զինվորներին հինգ քաղաքներում ցրելուց հետո խանի զորքերը, հանկարծակի հարձակումներ գործելով, գրեթե բոլորին կոտորում են, ներառյալ իշխան Բեկովիչ-Չերկասկուն [29, էջեր 21-22, 39-40, 185-186; 30]: Նմանությունն Ավետարանոցի սպանդի հետ այստեղ հատկապես այն է, որ ռուսական զորքը բաժանվել է ավելի փոքր մասերի ու զգալիորեն թուլացել, այնուհետև միայն ենթարկվել անսպասելի հարձակումների:

4. [1724 թ.] 1723 թ. հուլիսի վերջին 600 դրագուններից բաղկացած մի ռուսական գումարտակ՝ փոխգնդապետ (հիշատակվում է նաև որպես գնդապետ) Չեմբուլատովի (Չեմբուլատով) հրամանատարությամբ, առանց կովի տիրանում է ռազմական տեսակետից կարևոր Մայան ամրոցին և Կուրի գետաբերանին (Բաքվից մոտ 140 կմ դեպի հարավ-արևմուտք) ամրացված ճամբար կառուցում: 1724 թ. օգոստոսի 31-ին Մայանի կառավարիչը՝ *նայիր* (խանի «տեղակալ») Հուսեյն-բեկը, համագործակցելով տեղի խանուհու հետ, հրավիրում է Չեմբուլատովին ու նրա հետ ևս 20 ռուս զինվորականների (1 կապիտան, 2 պորուչիկ, 1 պոդպորուչիկ, մեկ «կոնդուկտոր» և 15 զինվոր) ճոխ ճաշկերույթի, որտեղ էլ նրանց բոլորին ուխտադրժորեն սպանում են: Այնուհետև նայիրի գլխավորած զորքը հարձակվում է ռուսական գումարտակի վրա, որը մարտի բռնվելուց հետո կարողանում է նավակներով նահանջել Բաքու [35, էջեր 127, 232-233, 252. հմմտ. 39, էջ 13]: Ընդ որում, Չեմբուլատովի խմբի սպանությունը կազմակերպած Հուսեյն-բեկը (Հասան-բեկ) մի քանի տարի անց մտել է օսմանցիների ծառայության մեջ [31, էջ 91]:

5. [1725 թ.] 1725 թ. մարտի 3-ի հատուկ ռազմագործողությունը, որի արդյունքում Վարանդայի 33 գյուղերում (հաստատապես՝ նաև նույն Ավետարանոցում) մի գիշերվա ընթացքում ոչնչացվում է 4700-հոգանոց օսմանյան մի ամբողջ հեծյալ զորամիավորում: Թշնամու զորքի մեծաթիվությունը պահանջում էր որակապես շատ բարդ ու ենթաբաժանված՝ «բանակային» մակարդակի ռազմագործողության պլանավորում և իրագործում: 1723 թ. հունիսին Ավետարանոցում շիրվանցի հայ ռազմիկների սպանության հետ նմանություններից կարելի է նշել, թերևս, գաղտնապահությունը, անսպասելի-

ությունը, հարձակման գիշերային բնույթը, ինչպես նաև ավարտական արարը՝ երկու դեպքում էլ սպանվածների գլուխներն ուղարկվում են շահ Թահմասա Բ-ին [22, էջեր 193-195; 6, էջեր 78-80]:

6. [1786 թ.] 1786 թ. Ղարաբաղի Իբրահիմ-խանը հայ մելիքներին խնջույքի է հրավիրում և հաշվեհարդար տեսնում նրանց հետ՝ թունավորելով նաև Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին [34, էջ 222]:

7. [2012 թ.] 2012 թ. օգոստոսի 10-ին Աֆղանստանի հարավային Հելմանդ նահանգում աֆղանական ոստիկանության մի սպա նախալուսային հյուրասիրություն է կազմակերպում ԱՄՆ ծովային հետևակի երեք հատուկ ջոկատայինների համար, սպա ճաշկերույթի ընթացքում գնդակահարում նրանց, այնուհետև փախչում և անցնում Թալիբանի ապստամբների կողմը [45]:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աբրահամյան Ա. Գ.** Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (ռուսումնասիրություն և վավերագրեր): Երևան. ՀՍՄՌ ԳԱ հրատ., 1953:
2. **Այվազյան Արմեն.** Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Մյունխեն. – «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 63-80:
3. **Այվազյան Ա. Մ.** Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին. – ՊԲՀ, 1991, № 1, էջ 93-100:
4. **Այվազյան Արմեն.** Հայկական հետախուզության գաղտնի գործողությունները 1720-ական թթ. (I–V) / **Айвазян Армен.** Тайные операции армянской разведки в 1720-х гг. (I–V). – «Հայաստանի գրուցակից» / «Собеседник Армении», #3 (212), 27 հունվարի, 2012 թ., #4 (213), 3 փետրվարի, 2012 թ., #5 (214), 10 փետրվարի, 2012 թ., #8 (217), 2 մարտի, 2012 թ., #18 (227), 11 մայիսի, 2012 թ. (հայերեն և ռուսերեն):
5. **Այվազյան Ա. Մ.** Հայ զինվորականության պատվով վարքականունը (4-5-րդ դարեր): Երևան. Մատենադարան, 2021:
6. **Այվազյան Արմեն.** Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին: Երևան. «ՆՏ Հոլդինգ», 2022:
7. **Այվազյան Ա. Մ.** «Ընդդեմ 1724 թ. Երևանի հերոսամարտի պատմության աղճատման». – Հայկական քաղաքագիտական հանդես, 2023, № 1 (19), էջ 127-170:
8. **[Գիլանենց, Պետրոս դի Սարգիս.]** Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի (հրտ. և ծանոթագր.՝ Գ. Ախվերդյանի). // «Կռունկ Հայոց աշխարհին», 1863 (Թիֆլիս), № 2, էջ 81-112:
9. **[Գիլանենց, Պետրոս դի Սարգիս.]** Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի (հրտ. և ծանոթագր.՝ Գ. Ախվերդյանի). // «Կռունկ Հայոց աշխարհին», 1863 (Թիֆլիս), № 3, էջ 181-212:

10. Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխատասիրեց Սամուէլ վրդ. Արամյան: – Վենետիկ-Ս. Ղազար, 1978:
11. «Իվան հայ վիմագրության»: Պրակ V. «Արցախ»: Կազմեց **Ս. Գ. Բարխուդարյան**: – Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1982:
12. **Եսայի կաթ. Հասան-Ջալալյան**. Պատմութիւն համառոտ Ադուանից երկրի: – Երուսաղէմ, 1868:
13. **Լեո**. Խոջայական կապիտալ: – Երևան. Պետհրատ, 1934:
14. **Խաչատրյան Հ.** Հայկական էսկադրոն. – ՀՍՀ, հ. 6: – Երևան, 1980, էջ 175-176:
15. **Կյուլպենկյան Ռ. Վ.** Հայ-պորտուգալական հարաբերություններ: – Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
16. **Կոստիկյան Քրիստինե**. Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտականքը և 1730-31 թթ. նրա արշավանքը դեպի Երևան. // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, էջ 356-371:
17. **Մաղալյան Արտակ**. Արցախի մեկիբությունները և մեկիբական տները XVII-XIX դդ.: – Երևան. «Գիտություն» հրատ., 2007:
18. **Յովհաննիսեան Ա.** Պետրոս դի Սարգիս Գիլանէնց. // «Արարատ», 1916, № Ա-Բ (յունուար-փետրուար), էջ 105-128:
19. **Չորանյան Պավել**. Ուշագրավ վկայություն և մեկ ճշգրտում. // «Պատմա-բանասիրական հանդես», 2002, №1, էջ 205-209:
20. **Սարգսյան Ա. Յու.** Ղարաբաղի բարբառի բառարան: – Երևան, 2013:
21. **Բաֆֆի**. Խամսայի մեկիբությունները: Երկերի ժողովածու (12 հատորով), հ. 9: – Երևան. «Սովետական գրող», 1987:
22. **Այվազյան Ա. Մ.** Ручное огнестрельное оружие армянской армии в 1720-х гг. (количество, виды, производство и добыча). // «Метаморфозы истории», 2016. Вып. 8, с. 176-200.
23. Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. – Ереван: изд-во АН Арм. ССР, 1968.
24. **АРО-I** = Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под ред. Аш. Иоаннисяна. Ереван: Изд. АН Арм. ССР, 1964.
25. **АРО-II** = Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна. – Ереван: Изд. АН Арм. ССР, 1967.
26. **АРО-IV** = Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.). Сборник документов, т. IV, под ред. М. Г. Нерсисяна. – Ереван: Изд. АН Арм. ССР, 1990.
27. **Арутюнян П. Т.** Освободительное движение армянского народа в I-ой четверти XVIII века. – Москва: изд-во АН СССР, 1954.
28. **Балаян Б. П.** К вопросу об общности этногенеза шахсеван и кашкайцев. // «Востоковедческий сборник» («Արևելագիտական ժողովածու»). – Ереван: Изд-во АН Арм. ССР, 1960, № 1, с. 331-378.
29. **Безгин И. Г.** Князя Бековича-Черкасского экспедиция в Хиву и посольства флота поручика Кожина и мурзы Тевкелева в Индию к Великому Моголу (1714–1717 гг.). Библиографическая монография. – СПб.: Тип. Р. Голике, 1891.
30. **Бородин Владимир**. Первый Хивинский поход. // Русское поле, 2012, Вып. 1. (URL: http://golos.ruspole.info/node/2935#_ftnref15).
31. **Бутков П. Г.** Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год. Ч. 1. Предисл. от изд. Л. Броссе. СПб., 1869.
32. **Вахушти Багратиони**. История царства грузинского. Перевод, предисловие, словари и указатели Н. Т. Накашидзе. – Тбилиси, 1978.
33. **Даль В.** Пословицы русского народа: Сборник в 2 томах. Т. 1. – Москва: «Художественная литература», 1989.
34. **Иоаннисян А. Р.** Иосиф Эмин. – Ереван: Изд-во ЕрГУ, 1945.
35. **Курукин И. В.** Персидский поход Петра Великого. Низовой корпус на берегах Каспия (1722-1735). – Москва: Квадрига, 2010.
36. **Олеарий, Адам**. Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1637 годах // Чтения в императорском обществе истории и древностей российских. № 1. – Москва. 1869.
37. **Петрос ди Саргис Гиланенц**. Дневник осады Испагани афганами (1722-1723). Перевод и объяснения К. Патканова. – СПб, 1870.
38. **Петрушевский И. П.** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв. – Ленинград: Изд. Ленингр. гос. унив., 1949.
39. **Соловьев С. М.** История России с древнейших времён. Книга X, Т. 19-20. – Москва: Изд. социально-экон. литературы, 1963.
40. **Чекулаев Н. Д.** Армянские эскадроны в составе русских войск. 1723-1764 гг. // Военно-исторический журнал, 2008, № 12, с. 76-77.
41. **Эзов Г. А.** Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел... и других учреждений. – СПб: Типография Импер. АН, 1898.
42. **Aivazian Armen M.** The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal. – Yerevan. American University of Armenia, 1997.
43. *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz.* Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and Additional Notes by Laurence Lockhart. – Lisbon: Imprensa Nacional, 1959.
44. **Olearius, Adam.** *The Voyages and Travels of the Ambassadors Sent by Frederick, Duke of Holstein, to the Great Duke of Muscovy and the King of Persia...*; faithfully rendered into English by John Davies. – London: Printed for John Starkey and Thomas Basset, 1669.
45. “Second deadly attack on US troops in Afghanistan,” BBC, August 11, 2012 (URL: <https://www.bbc.com/news/world-asia-19221821>).

Տճանա/Հանձնվել է՝ 04.08.2024
 Բազմա/Գրախոսվել է՝ 14.08.2024
 Մտնա/Ընդունվել է՝ 18.08.2024